

**ԱՐԶԵՍՏԱՎՈՐԱԿԱՆ ԱՎԱՆԳՈՒՅԹՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԼԵՆԻՆԱԿԱՆՑԻՆԵՐԻ ԿԵՆՑԱՂՈՒՄ**

Հայաստանում սովորական կարգեր հաստատվելուց հետո սկսվեց խաղաղ շինարարությունը, որի մեջ իր տեղն ունեն հարկավոր էր արհեստավորությունը, կլերստանդարտացի արհեստավորները նույնպես աշխատում էին բազմաթիվ կյանքի կարգավորելու գործին՝ էնտ մինչև այդ, արհեստավորները սկսեցին ինչ որոշ տալիս քայլերով՝ տնտեսություններին, Կապալի պոստի, Պարկոնների և Սենսկու որդանոցների որդերին՝ արհեստ սովորեցնելով նրանց՝ 1922 թ. բազմաթիվ խորհրդի գործադիր կոմիտեի որդումար սկսվում է փոխանցելու կարգավորումը 1923 թ. հաստատվում է բազմաթիվ ստալին բյուրոն, որը կազմում է 360 հազար որդի և Բուդարի արհեստավոր կենդանու սկսվեց կազմակերպական մի շրջանը Նինարարական աշխատանքի բնդդրկվելին հատկապես կառուցողները Շուկայամբը արհեստավորական շարքերի մի մասը բանդվում ու ստեղծվում է բազմաթիվ հրապարակու Շինարարական ուղխատանքներում բնդդրկված կառուցող վարպետներին վատահում էին հատկապես պատանխատու կառույցները՝ կամուրջներ, կամարներ, բարդ խրամույրներ և այլն և այլն՝ և այլն՝ վարպետ Մ. Բումբաղյանին վատահում է Կապուսանոգ հանապարհի կոմիտեի կառուցումը և այլն¹։

և կոտի ունենալով կլերստանդարտացի արհեստավորական-րանիորական բնույթը, արտադրական հնարավորությունները, ՀՍՍՀ կառավարությունը նախանշում է այդ բազմաթիվ վրա բազմաթիվ բազմաթիվ խորհրդարանական կենարտին Հատկացումներ ևն արվում է ներդրողի ու շինարարական բազմաթիվ համար, կառուցվում է

նոր կլերարական, ինչ տպարանների բազմաթիվ 1921 թ. ստեղծվում է նոր տպարան և այլն, էնտես մասնավոր էին աշխատում մի բանի մանր ձևերակություններ, ջրաղացներ, ձիվհաններ, արհեստական զգալի կարողություն ունեցող արհեստանոցներ՝

Արտադրական ձևերակությունների սանդղման և բնդլայնման համար նկատի էր առնվում նաև կլեր-Պոլի դյուդատնասական ջրաղացար, նրա արտադրանքը, հասկապես հացահատիկ, անասուններ, կալնամիլեր և այլն պետ է մշակվել կլեր-Պոլում։

Սովորական կարգերի հաստատումից անմիջապես հետո, 1922 թ., սկսվում է Շիրակի ջրանցքի կոռուցումը, որն ավարտվում ու քրանցքը հանդիսավոր կերպով բացվում է 1925 թ. հունիսի 21-ին Կապու պոլի ստորգետնյա թունելի մոտ Շիրակի ջրանցքի, իդրոկլերարականի, ինչպես և Հայաստանի ուրիշ հիդրոշինարարական կառույցների հեղինակ, կազմակերպիչ ու ղեկավար էր հայ նախահեղափոխական մատվորականության ներկայացուցիչ, հիանալի ինժեներ Ի. Ա. Տեր-Ասումաժարյանը²։

1923 թ. Իվանով-Վոգեսանսկից նվեր ստացած ոտոտին մերենաներով հիմնվեց տերապիդործարանը, որը սկզբնական շրջանում տեղադրվեց Ձիվոցյանների դարերի գործարանի շենքում, և կոռիին արտադրանքը դործարանը սկսեց 1924 թ. հունիսի 25-ին Հետադայում, 1924—27 թթ.

¹ Կ. Կոլմուս, Լենինական, էջ 45—46։

² Տե՛ս Ա. Բումբաղյան, Նշվ. տեղ., էջ 101։

³ Առաջին նվեր մերենաներ (1600 իլիկ ունեցող մերենաներ, 32 հաստոց) ստացվել են 1922 թ. Իվանովի մարդի վիճակա բազմաթից (Տե՛ս Լենինական 40 տարի և նրան, 1964, էջ 51)։

¹ Պի՛Ա, Մ. Բումբաղյանի նյութեր, տետր 3։

² Տե՛ս Պի՛Ա, Մ. Բումբաղյանի նյութեր, տետր 3—4։

«Զիջողցոնց դարձում» տեղամասում կառուցեցին զործարանի նոր մասնաշենքերը, 1928 թ. շարք է մտնում տեքստիլ-կոմբինատի նոր մանարանը, Ամենուրեք սկսվում է շինարարական եռուն աշխատանքը: Քաղաքի աշխատավորությունը Վ. Ի. Լենինի հիշատակը հավերժացնելու համար ցանկություն հայտնեց քաղաքը վերանվանել անմահ առաջնորդի անունով, ու 1924 թ. հունվարի 27-ին Ալեքսանդրապոլը վերանվանվեց Լենինականի: Այդ կապակցությամբ 1924 թ. հունվարի 30-ին ՀՍՍՀ Կենտրոնական և Ժողովուրդների ողջունի հեռագիր են հղում Լենինականի աշխատավորությանը, «Բանվոր» թերթի 1924 թ. փետրվարի 3-ի համարում գրված է. «Ալեք-Պոլ (Ալեքսանդրապոլ) անունը փոխվում է Լենինականի: Հունվարի 27-ից չկան, գոյություն չունեն Ալեք-Պոլ, Գյումրի անունները. կա, գոյություն ունի Լենինական»: Այնուհետև եղան առաջադրվող զործարանի, Շիրազից քիմիական արտադրության, հիդրոէլեկտրակայանի և նոր ձեռնարկությունների հիմնադրումը և այլն: Կառուցվեցին կինոյի և հասարակական ուրնակների ուրիշ շատ շենքեր, որոնք Լենինականում խոշոր շինարարության առաջնեկներն էին:

Արտադրական ձեռնարկությունների կողքին բավական մեծ նշանակություն ունեցող արհեստանոցների գոյությունը նկատի ունենալով և վերականգնման դործում դրանց աշխատանքը ավելի կազմակերպված օգտագործելու համար, Լենինականի ղեկավար մարմինները ձեռնամուխ եղան արհեստավորների կոոպերացիաներ՝ արհեստագործական արտեղների կազմակերպմանը: Թոթափելով միջնադարյան համբարական բաղամթիվ կաշկանդող սովորույթները, արհեստավորները հեռուհեռ մտնում էին պեսականորեն իրենց շահերը պաշտպանող կոոպերացիաների մեջ, ուր բացառված էր շահագործումը, չտրաջահումն ու փիմաղրկումը:

Կազմակերպելով արտեղներ, միավորվելով միությունների մեջ, արհեստավորական շատ կազմակերպություններ աստիճանաբար վերածվում էին խոշոր ձեռնարկությունների, այսպես, արիկոտած արտեղը 1925 թ. միացավ տեքստիլ զործարանի վարչությանը. այնուհետև ստեղծվեցին դուլպայի և տրիկոտաժի, կտրի, կոշիկի ֆարրիկաները:

Բայց կային նաև առանձին կրպակներ, խանութներ, արհեստանոցներ, որոնք մասնավոր աշխատանք էին կատարում և ղեկավարվում

ամբարական և արհեստավորական պետև պահպանված սովորույթներով:

Պեսականացնելով խոշոր սեփականատերերի, վաճառականների խանութները, ձեռնարկությունները, կառավարությունը ձեռք չտվեց արհեստավորներին ու չէր խանդարում նրանց գործունեությանը: Այդ արհեստներից մի քանիսը, որոնք որոշ փոքր կարևոր էին կենցաղային կարիքների սպասարկման համար, դեռևս հապաղում, երբեմն չէին ուղղում ընդգրկվել արտեղների մեջ: Դեռ ավելին, պառպապանների համբարությունը 1920 թ. հետո նորից վերականգնվեց և գոյություն ունեցավ մինչև 1924—25 թվականները: Քաղաքի փողոցներում շրջում էր մոտ 200 կառք: Բայց անհիմնալի մուտքը հեղհեղհեղ նվազեցնում է դրանց նշանակությունը, և այդ համբարությունը նույնպես վերացավ: Ասենք, այդ «համբարությունն» էլ զրեթե ձևական էր և մյուս մասնավոր արհեստների նման ղեկավարվում էր միայն սրող սովորույթներով:

Ի տարբերություն արդյունարերական օբյեկտների, որոնք ազդանացվեցին անտեսության վերականգնման հենց սկզբից (1921—1928), արհեստագործությունը, տնայնտնությունը կոոպերացվում էր կամավոր սկզբունքներով՝ տարիների ընթացքում:

Ղեկավար մարմինները, իրենց ցանկությանը թողնելով այդ մի քանի արհեստների արաելների մեջ մտնելու հարցը, յայդուհանդերձ, թե՛ մասնավոր և թե՛ արտեղային արհեստանոցներում արհեստավորական միությունների միջոցով հետևում ու պայքարում էին շարաշահումների, ջահագործման դեմ, պաշտպանում սաղկերտների ու բտնվորների շահերը: Միաժամանակ, ղեկավար մարմինները օգնում էին արհեստագործական կոոպերացիային հումք հայթայթելիս, արտադրությունը կազմակերպելիս ու սրղյունքները իրացնելիս և այլ հարցերում, Այս բանին անտարբեր չէին կարող նայել մասնավոր արհեստանոցների րանվոր-վարպետները, որոնք և առտիճանարար մրտնում էին կոոպերացիա:

Ի ՀԱԻԱ, Կ. Գուրգարյանի հաղորդած նյութերը և հեղինակի հավաքած նյութերը, Լենինականում եղել է 172 ձիակառք, կառապանները րաղարի կենցաղում ուրույն սեղ են ունեցել ու պատվովոր մարդիկ են համարվել: Ինչպես նրանց կենցաղի, այնպես էլ այդ տրանսպորտի վերագման տիպական նկարագրությունը մասամբ տրված է Խ. Գաշտենցի «Փառաոն Ալեր» պոեմում (Երևան, 1967):

Ն. Ա. Արսեղյան, նշվ. աղբ., էջ 8:

Ն. Ա. Ա. Լուդվիգս, Լենինական, էջ 61—62:

⁶ Տե՛ս «Լենինական 40 տարի», Երևան, 1964, էջ 5, 9:

Ի այն տնտեսության և շինարարության բաղորդախառնարկներին, կատարվող վերափոխություններին խոշոր հարված հասցրեց 1926 թ. հոկտեմբերի 22-ի սոսկայի երկրաշարժը, որը ավերածություններ պատճառեց ոչ միայն քաղաքին, այլև գյուղատնտեսության մի շարք գյուղերի, հասցնելով մոտ 25 միլիոն տուրլու վնաս: Երկրաշարժից առաջացած տաყնապար մի պահ շփոթեցրեց բնակչությանը, բայց արագորեն հեռանալու մասամբ հեռացան Լենինականից: Անմիջապես կազմակերպվեց արտակարգ հանձնաժողով, միջոցներ ձեռք առնվեցին տուրքին հղումների համար, որին մասնակցում էր քաղաքի և գյուղերի ամբողջ բնակչությունը, կայացարք, բանվորները և այլն: Կառուցվեցին փայտյա տներ, վաղանները վերափոխվեցին անակների: ՍՍՀՄ կառավարությունը աջակցություն տալով, բազմազգ հանրապետությունների եղբայրական հղումներով արագ կերպով սկսվեց երկրաշարժի հետևանքների վերադարձը: Ավերված քաղաքի վերակառուցումը հաշտ առնելու, երկրաշարժի վնասներն արագ վերականգնելու համար նախատեսված միջոցառումներում բանվորների և գյուղացիների հետ մեկտեղ նշվում էր նաև արհեստավորների լայն ընդգրկումը: Նախագծվեց քաղաքի երրորդ հատակագիծը, որի հեղինակն էր ճարտարապետ Գ. Զիսլանը (Զիսլ), նաև տաղաններից էր, որ եկավ երկրաշարժից առաջին Լենինական: Քաղաքի հատակագծմանը մեծ աջակցություն է ցույց տվել նաև տեխնիկական արտադրության Ա. Բումանյանը: Կառուցումներ էին արվում քաղաքի հյուսիսային և հյուսիս-արևելյան մասերում: Տեղական օրդաները միջոցառումներ էին մշակում նաև արհեստավորական կյանքը աշխուժացնելու ուղղությամբ: Կառավարությունն աջակցում էր բոլոր այն արհեստավորներին, ովքեր ուզում էին կրթական բաժնուր: Սակավակ էր փոխօգնության գրամարկը (ՓՄԳ), վարկային բնակչություն, որը վարկ էր տալիս արհեստավորներին՝ իրենց գործը կազմակերպելու համար: Արհեստավորների կարիքը առանձնապես մեծ էր առանձին տնտեսություններին օգնելու տեսակետից: Պետական հանձնաժողովը ստեղծելով բնակիչների կարիքները, բնակարանային գործընկերներ, օգնություն էր ցույց տալիս վերականգնելու քանդված տները կամ տնտեսություններ: Երբեմն չէր բավականացնում արհեստավորական ձեռքը: Ընդհանուր առմամբ ստեղծվեց արհեստների տեխնիկական համար: Առկային այս երև-

ույթը իր հետ բերում էր նաև որոշ սովորույթների վերականգնում: Այս իրավունքներ ձեռք բերելու, արհեստավորները երբեմն զաղտեի կիրառում էին հին կազմակերպման ձևեր ու սովորույթներ, որոնց մեացուկները տարբեր արտահայտություններով կարելի էր նկատել մինչև վերջերս: Մեծացավ արհեստության ձեռք բերած մասնավորների թիվը: Արհեստների պահանջն ու գրա հետ կապված նոր կազմերի անհրաժեշտությունը հնարավորություն տալով ձեռք բերելու նաև որոշ հետամնաց սովորույթների աշխուժացմանը նախնիսկ արտերկրի մեջ: Սովորաբար աշակերտը և բանվորը աշխատում էին վճարով: Վարպետը, միության հետ պայմանագիր կնքելով, պարտավորվում էր բանվորներին կամ աշակերտներին վճարել որոշ աշխատավճար, բավարարել նրանց անհրաժեշտ պիտույքներով: Սակայն, ձեռնարկներն այդ կարգը պահպանելով, վարպետը անձամբ ոչինչ չէր վճարում, և բանավոր, գաղտնի պայմանագրությամբ աշակերտից կամ բանվորից ստանում էր ուսուցման վճար: Քայքայված վաճառականները, նախկին սեփականատերերից ոմանք, արհեստ սովորելու նպատակով պայմանավորվում էին վարպետի հետ՝ վճարել նրան արհեստ սովորելու համար: Պատահել էր զեպերը, երբ վարպետը նախքան աշակերտ կամ բանվոր ընդունելը, բանավոր կերպով պայմանավորվել էր որևէ անձի հետ՝ վճարով արհեստ սովորեցնել և հետո միայն համաձայնվել միության հետ պայմանագիր կնքելու, որը դառնում էր ձեռնարկ: Շատերն էն համաձայնվել այդ կերպ աշխատելու, միայն թե արհեստ սովորեին, որովհետև սովորել ժամանակաշրջանում այն շատ տարածված ու եկամտաբեր էր: Արհեստավորների միությունները խստորեն հեռանում էին, որպեսզի նման խախտումներ չլինեին և աստիճանաբար ընդլայնում էին իրենց գործունեությունը արհեստագործության բոլոր ճյուղերում: Տարբեր ճյուղերի արհեստների արտերկրի հետ մեկտեղ ստեղծվում էին նաև համապատասխան միություններ, ինչպես, կարի միությունը (որն ընդգրկել է զերծակներին ու լիտարկ կարողներին), կոշակակարների, գորգագործների, մետաղագործների և այլ միություններ: Ընդհանուր առմամբ միությունները ենթարկվել են մեկ ընդհանուր կենտրոնական մարմնի նախագահություն:

Աշակերտվող գործադուրկ արհեստավորներին ու կարգավորելով արհեստավորական կադրերի պատրաստումը, տեղական մարմինները ստեղծեցին նաև աշխատանքային բորսա, որն իր սրամա-

10 Նույն տեղում, էջ 50—56:

գրություն տակ ունեւր մի քանի արտել, վերանորոգման արհեստանոց ե այլն¹¹։

Մասնավոր արհեստագործներին աստիճանաբար կոոպերացիայի մեջ ընդգրկելով, արդեն 1932 թ. կար 16 արհեստագործական արտել¹², որոնք իրենց մեջ ունեին սարքեր ձյուղերի արհեստանոցներ։

Կարևոր էր կադրերի հարցը։ Ինչպես հայանի է, հալ տեխնիկական ստավորականություն, որպես այդպիսին, գոյություն է ունեցել Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց շատ տուաջ, սակայն մեծ մասամբ Հայաստանից դուրս¹³։ Արդյունաբերության որոշ ձյուղերի սահղծման համար ալծմ անհրաժեշտ էր մասնագետներ հրավիրել դրսից։ Սակայն այնպիսի ձյուղերում, ինչպես շինարարության մեջ, արհեստագործության հիման վրա ստեղծվող որոշ ձեռնարկություններում կարելի էր ներգրավել հմուտ վարպետների, մասնագետների, որպիսիք գրալի թիվ էին կաղմում հատկապես կենինականում։ Տեղական ղեկավար մարմինները, տանելով վերագատարակական աշխատանք, նրանց օգնությամբ պարաստում էին նոր կադրեր, որպիսի երևույթը համընդհանուր էր ամրողը Հայաստանում¹⁴։ Սովետական կարգեր հաստատվելուց հետո շատ տեխնիկական բարձրակ մասնագետներ լծողեցին իրենց ձեռնարկությունները և նվիրվեցին սոցիալիստական շինարարության գործին։ Այդպիսիներից էին կենինականի երկաթուղային կայարանի աշղեկ Կոնստանդին Զորարովը և ուրիշներ¹⁵։

Արտագրական ձեռնարկությունների, արհեստագործական արտելների, գործարանային շինարարության համար անհրաժեշտ պատրաստակաություն ունեցող կադրեր պատրաստելու համար րացվում էին ուսումնական հաստատություններ, իլնելով կենինականի արդյունաբերական-արհեստավորական ընույթից, բացվեցին րանֆակ (1923), աշխատանքի կենտրոնական ինստիտուտ (ԱԿԻ)¹⁶, տեխնիկումներ¹⁷, ֆարերկա-գործարանային ու-

սումնարաններ, երկաթուղային գործուս և այլն։ Միաժամանակ գործարաններին, շինարարություններին կից ստեղծվում էին խմբակներ, բրիգադներ, ուր հրավիրում էին հմուտ վարպետների։ Նրանց օգնությամբ լավ վարպետներ դարձան երկաթուղու գործուսի շատ սաներ։ Սակայն վարպետների մի մասը աշխատում էր իր հմտության որոշ գաղտնիքները հաղորդել, մեհաշնորհն ու կախումը միշտ իրենց պահելու նպատակով։ Իսկ մի ղղալի մասն էլ ընդհանրապես հրաժարվում էր որեէ բան սովորեցնելուց։ Առանձին վարպետներ հրավիրվում էին շինարարական աշխատանքները ղեկավարելու, որպես բրիգադիր, գլխավոր վարպետ և այլն։ Սակայն երբ 1929 թ. որմնադիր վարպետ Մ. Թամրազյանին հրավիրում են տեքստիլիի համար բարտաշների բրիգադ կաղմակերպելու, և նա համաձայնվում ու սկսում է աշխատանքը, հին վարպետներից շատերը, — նշում է Թամրազյանը, — թշնամանքով էին նայում բրիգադների ստեղծմանը, կարծելով, որ այդ բրիգադները «անգործ կթողնին իրանց» ու «հացը կառնին ձեռքերեն»։ այդպիսի վարպետները բամբասում ու հայհույում էին ուսուցում նախաձեռնողներին¹⁸, Իսկ նոր կադրերին էլ չէին վստահում՝ հումարելով նրանց «կիսատ-պոատ» վարպետներ։

Թերահավատորեն նայելով պետական ուսուցմանը, այնուամենայնիվ, հին վարպետները չէին կարող անտեսել ստեղծված այն հնարավորությունները, հատկապես րարձրագույն ուսուղման րնաղավառում, որին նրանք ձյուել էին երկար տարիներ։ Հին վարպետները, պատվախնգրությունից կլնելով, իրենց ամրողը պիտելիքները որդիներին տալուց հետո նրանց ուղարկում էին ուսման այնպիսի մասնաղիտության մոտ լինելը պապի, հոր արհեստին¹⁹։ Իսկ երբ րարձրաղույն

ղերեկտոր Գ. Աղեկյանը, անձամբ ինքն ու մի քանի ուրիշ վարպետներ, որոնք հոժարությամբ իրենց սեփական գործիքները տրամաղում էին այդ գործին։ Գործնական պարապմունքներից րացի, ԱԿԻ-ում անց է կացվել նաե քաղաքական ուսուցում, որը ղեկավարել է Գ. Աղեկյանը, աեխ. պարաստականություն, ամենօրյա պարագիր մարմնամարզություն։ Սերորյանը հիշատակում է, որ երիասարղության հետ ԱԿԻ էին ձյաում ու սովորում րավական թվով ասարեց մարղիկ, Պահպանվել են դրանց աղղանուններն ու նկարները (Տե՛ս հեղինակի հավաքած նութերը)։

¹⁷ Ասաղին տեխնիկումները Ալեքսանդրաղղում ե երեւանում՝ դրանք ինղուսարիալ տեխնիկումներն էին։ Ալեքսանդրաղղում այն կաղմակերղղեց 1921 թ. հոկտեմբերին (Տե՛ս լենինական 40 ասրիա, երեան, 1964, էջ 69)։

¹⁸ ՊԻԱ, Մ. Թամրազյանի նյութերը, անար 3։

¹⁹ Նույն անղում, անար 5։

¹¹ ՀԱԻԱ, հեղինակի հավաքած նյութերը։

¹² Կ. Կաղմալան, կենինական, էջ 61։

¹³ А. Грузовых, н.д. а.п., էջ 318։

¹⁴ Նույն տղղում, էջ 320—321։

¹⁵ Նույն անղում, էջ 95։

¹⁶ ЦИТ — Центральныи институт труда. Ի ասրերություն րանֆակի, որանղ րանղոր երիասարղները ստանում էին միղին մասնաղիտական կրթություն, ԱԿԻ-ի դասընթաղներում հմուտ վարպետների մասնակցությամբ սովորեցնում էին ասրերը արհեստներ։ ԱԿԻ-ի փականաղղործականըրմուղային արաղղամասի ղլխավոր վարպետ Կարաղետ Սերորյանը նշում է. որ կենինականում ԱԿԻ-ի հիմնաղղերից էին Մոսկվայից հրավիրղած Ի. Բուրնղղը, հեսաղղայում ԱԿԻ-ի

կլիմայամբ նորաժարտները գալիս էին. ներքե կարծես գիտելիքներով չափվում էին երիտասարդների: Եւս ու իրենց պրակտիկ գերագանցությանը աշխատում նսեմացնել նրանց. Գաղանի պահելով պրակտիկ ներամատությունները, աշխատում էին բարձր պահել իրենց արժանապատվությունը. խորհրդավորություն էին տալիս իրենց կառուցածին, պատրաստածին: Որդիներին աշխատանքի, ուսման, բարձրագույն կրթության ուղարկելիս իրենց պապական արհեստին մոտ մասնագիտությունն ընտրելու սովորույթը բնորոշ ու հատկանշական էր ոչ միայն լենինականցիների, այլև արհեստավորական միութային քաղաքների կենցաղին: Ուստի դարմանալի է, որ նախկինում հայ երիտասարդները, որանդ էլ որ գնում էին սովորելու, ընտրում էին հստի և ուսաչ տեխնիկական մասնագիտությունները: Այսպես, նախահեղափոխական տարիներին Ողեսայի համալսարանի համալսարանական բաժիններում և հարկովի տեխնոլոգիական ինստիտուտում սովորել է ավելի քան 650 հայ ուսանող²⁰:

Հետագայում, ինչպես հին վարպետներից շատերն են ուսում, հին արհեստավորների աշակերտները ցույց տվեցին իրենց հմտությունը, հաճախ զերազոտեցելով նրանց:

Որպես օրինակ ունենալով ուսուցից կառույցները և տեխնոլոգիայի հորապատ մնալ դարերի փորձով ստեղծված հմտություններին, նոր վարպետներն աշխատում էին նոր երանդ առնելով զրանց, ստեղծագործարար վերարտադրել հին ու նշխատում էին պարզություն, լեկկոնություն մաղնել կառույցների մեջ, ուսուցից ընակտրանները ծածկելով էին լիկեղյա պայծառ գույնի տանիքներով, հրամուրիում էին ոչ զործնական, հնացած ձևերից և այլն²¹:

Արապարական կենցաղի փոփոխություններ էին կատարվում հստ մյուս արհեստների մեջ: Գյուղատնտեսության վերականգնման, տնտեսությունների կապերի փայլման կապակցությամբ քաղաքում արհեստների կարիքը շարունակաբար մեծացավ և գյուղատնտեսության կարիքներին ծառայող որոշ արհեստներ վերադարձան գյուղ: Մի բանի մանր արհեստներ էլ վերացան կամ մտան գյուղ տեղափոխված կամ քաղաքում մնացած արհեստավորական արտադրամասի մեջ: Այսպես, գուս

գյուղատնտեսական գործիքների դարձնող այլևս կարողությունը արտադրամասում աշխատելու էին նաև գեղականգործական. բանող տնտեսների պայտման և ուրիշ գործեր: Զիս սարքերի արհեստանոցը ամբողջացնում էր նախնիների բազմաթիվ մանր արհեստները: Քաղաքում հիմնականում ամբողջանում էին գյուղատնտեսական նշանակություն ունեցող այն արհեստները, որոնց այստեղ մնալը թե՛ հումքի ձեռք բերման և թե՛ սպասարկման ներառվորությունների ահապակետից նպատակահարմար էր:

Կենցաղային մասնակի կարիքները բավարարելու համար մնում էին նաև մի քանի փոքր արհեստանոցներ: Մասնաշաղկապ գործարանային արտադրությունը, բավարարելով բնակչության սպառողական հիմնական կարիքները, տեղական նեղ պահանջների բավարարումը թողնում էր արտաքինների, արհեստավորական արտադրամասերի հոգացողությունը: Քաղաքի ազգայնակալությունը զուլուրդներ կրում էր շրջապատի՝ գյուղական միջավայրի ազդեցությունը: Նա հնիզ ժառանգել էր կենցաղում պահպանված ոչ միայն սովորույթներ ու սովանդություններ, այլև բազմազան իրեր, առարկաներ և այլն: Եվ քանի որ այս ամենը ղեկեն կիրառության մեջ էին, պահպանվում էին նաև զրանց հնա աղբնվող արհեստները, անաղադրությունը (ղայայլի) պղնձագործությունը, ասիական տարադի զերծակությունը, ղլխարկ կարելը, բրուտագործությունը, լիկեղագործ-վառարանագործությունը, հացթխությունը և այլն²²:

Գյուղություն ունեցող արհեստների հիմնական մասը մինչև 1940-ական թթ., որպես կենցաղսպասարկման առանձին արտադրամասեր, ընդգրկված էին արտաքինների մեջ: Բայց զրանց կողքին ղեկեն մնում էին մասնավոր արտադրող աշխատող արհեստավորներ: Մասնավոր աշխատանք էին կատարում նաև սեղոնային շինարար վարպետները: Քաղաքում, ղյուղերում ծավալված անհատական շինարարությունը հնարավորություն էր տեղծում շինարար արհեստավորների այդ կարգի ղործունեության համար:

Պահպանվում էին նաև տալանդավային հին

²⁰ В. К. Восканян, Материалы из украинских архивов, «Известия АН Арм. ССР (серия общ. наук)», 1962, №3.

²¹ ՀԱԻԱ, Գեղեցիկի հավաքած նյութերը:

²² Լենինականիցիների կենցաղում տարածված է լավաշ հագի, ինչպես և փոքրում լիկեղ ու եփող գանաղան խմորեղենների ու խորտիկների օգտագործումը: Ուստի կան փոքր, որոնցից շատերը մինչև վերջերս էլ ավանդույթով կալվում էին իրենց հին վարպետների անուններով: Մինչև Լենինականի Գաղի գործարանի կառուցումը (1936 թ.), քաղաքը սպասարկում էին կոպերագիլի մեջ մտած հին հագթուխների (աքմարչիների) վերականգնած, ինչպես և նոր կառուցած փոքր:

սովորույթներ, հատկապես արհեստավորության արտադրական կենցաղում: Քաղաքի կենտրոնական հրապարակի՝ Կիրովի անվան փողոցի սկզբնամասում (նախկինում շուկայի ամենարանուկ տեղերից մեկը) առավոտյան վաղ կարելի էր տեսնել տարբեր արհեստավորներին՝ հյուսներ, քարտաշներ, սղոցողներ (խղարչի), փականագործներ և այլն: Այստեղ էին դալիս պատվիրատուներ, ու սկսվում էր սակարկություն նախատեսվող գործի վերաբերյալ: Հավաքվում էին նաև հին արհեստավորներ, ուստաբաշիներ ժամանցի համար՝ նարդի խաղալու, զրուցելու և այլն: Արանց հաճախ դիմում էին սակարկող կողմերը և որոնց խոսքը ծանրակշիռ էր մասնավոր գործարքների սլայմանագրության մեջ:

Սովորաբար, որևէ գործի համաձայնելիս, վարպեար, հաճախորդի ակախվ մասնակցությամբ, երբեմն նաև մեծ վարպետների խորհրդով ու միջամտությամբ, որոշում էր խումբը՝ ընկերակիցներին: Լինում էին նաև վաղօրոք իրար հետ ընկերացած ու գործած խմբեր, որոնք աշխատում էին միմյանց ձեռքից չխլել հաճախորդին և պահպանել աշխատավճարի կայուն չափ:

Այս շրջանում արհեստների որոշ ճյուղեր մեծ ծավալում սացան: Շինարարության հետ կապված և հատկապես թիթեղյա ծածկերի տարածումով ընդլայնվեց թիթեղագործությունը: Մինչև օրս էլ կարելի է աեսնել 1930-ական թթ. կառուցված տների տանիքներ, որոնք ունեն շքեղադարձ թիթեղյա ջրհորդաններ, քիվեր և այլն: Այս արհեստի զարգացմանը նպաստում էր նաև քաղաքում ջեռուցման սխեմաների սակավությունը: Տարածված էր վառարանագործությունը և այնպիսի արհեստներ, որոնք սպասարկում էին անհատական անտեսություններին: Արհեստագործական կոոպերացիան ստանում էր նաև պետական մեծ պատվերներ:

Լենինականում արդյունաբերության զարգացման պայմաններում, սակայն, արհեստներն աստիճանաբար ետ էին մղվում, վերանում: Տասնյակ արհեստներ դեռ մինչև հեղափոխությունը վերացել էին, դարձել կիսագործարանային, իսկ խորհրդային կարգեր հաստատվելուց հետո դրանք ավելի սակավացան՝ ընդգրկվեցին գործալուսնների մեջ: Չկային այլևս թղթի և ներկերի, օճառի և գործվածքների արհեստները: Արանների բազայի վրա ստեղծվել էին, ինչպես նշվել է, գուլպա-արկոտածի, կարի ֆաբրիկաներ, գործում էր մեխանիկական գործարանը և մյուս գործարանների տարբեր մեխանիկական արտադրամասեր, որոնց

համար եռյակես հիմնական բազա էին ծառայել Լենինականի բազմաթիվ արհեստները:

Այս արհեստներից շատերը անցել էին գործարան գրեթե նույնությամբ՝ սկզբնական շրջանում գործելով նույն տեխնոլոգիայով: Ընդլայնելով գործունեության չափերն ու մարդկանց թիվը: Գործարանները մասնկուլ՝ արհեստավորները իրենց հմտության հետ այնտեղ էին տանում նաև սովորույթներ, որոնք աշխատանքային նոր հարաբերությունների մեջ, այնուամենայնիվ, որոշ չափով արտահայտվում էին: Արհեստավոր վարպետներից շատերը կարողանում էին իրենց կամքը թևակոծել նույնիսկ պետական ձեռնարկության մեջ. նրանց նկատմամբ գիշողութար էին վերաբերվում նորաստեղծ գործարանների ղեկավարները:

Սակայն սկսած 30-ական թթ., գործարաններ էին դալիս նոր կադրեր: Գործարանների աևինիկական հզորացման հետ մեծանում ու համալրվում էր բանվորական կադմը ոչ միայն քաղաքացիների, այլև գյուղացիների, Ռուսաստանից եկող որակյալ բանվորների, հայրենադարձների թվից: Խոշոր ձեռնարկություններում ստեղծվում էին ավանգուդիների առաջացման պայմաններ: Հետզհետե մուսք գործող կրթված երիտասարդությունը իրագործում էր աշխատանքի նոր մեթոդներ, աստիճանաբար մերժելով աշխատանքի հին եղանակները: Սասնադետ, որակյալ բանվոր կարող էր դառնալ այժմ ոչ միայն վարպետի որդին կամ սովորականը, այլ յուրաքանչյուր ոք: Արտադրական առաջընթացը տեսնելով, շատ հին մասնագետներ նվիրվում էին երիտասարդ կադրերի ուսուցման գործին:

Հին ավանգուդիների սրտահայտությունները մի փոքր ավելի դանդաղ էին վերանում առավելադեպ նախկին արհեստների բազայի վրա ստեղծված փոքր գործարաններում ու ղեռես արհեստավորական աշխատանքի զգալի կիրառություն պահանջող ձեռնարկություններում: Արաադրական առաջնեկ էր, օրինակ, երկաթուղին՝ իր վազոնային և շոգեքարշային ղեպոներով: Այնտեղ աշխատանքի էին մտել բազմաթիվ արհեստավոր բանվորներ: Սա սոաջին արտադրական-արանսպորտային հիմնարկությունն էր Ալեք-Պոլում, որն ընդգրկեց մեծ թվով արհեստավորների: Ընչպես ասվել է, նախախորհրդային տարիներին սա որոշ ապահովություն էր ապրիս ընչազուրկ քաղաքացիներին ու գյուղացիներին: Այստեղ մարդիկ սաանում էին որոշ աշխատավարձ, հազուսու ե այլն: Խորհրդային կարգերի հասաաաումից հետո այդտեղ աշխատելու ցանկությունն էլ ավելի մեծացավ, Երկաթուղայինի աշխատանքը պատվա-

վոր էր համարվում Աշխատանքը այստեղ ֆիզիկական խմատով բավական աշխատատար էր, ինչպես իրենք են ասում, սողամարդու գործ էր։ Այսպիսի ունենալով աշխատանքի նման բնույթը, աստեղ, ի տարբերություն մյուս գործարանների, ամենափած էին որոշ արտոնություններ։

Երկաթուղային արհեստավոր-բանվորները ձեռքով էին աշխատանքի ընդգրկել իրենց ընտանիքի անդամներին, որդիներին, երկաթուղային մասնագիտությունների ուսուցման ուղարկել նրանց։ Երբեմն հնարավորություն չունենալով անձամբ աշխատանքի անցնելու մեծ ապագա ունեցող երկաթուղում, նախկին վարպետներն իրենց որդիներին էին ուղարկում այնտեղ աշխատելու։ Նախկին արհեստավորներից ու նրանց ժառանգներից շատերը մտնում էին աշխատելու երկաթուղու գեպուներում, շուկարաշի վրա և այլուր, իսկ շրջանի ղյուղական բնակչության համար նպատակահարմար էր գծային աշխատանքները ղեկավարելու, պնայրների անձնակազմում և այլն։ Արտադրական տուաչենկում բարենպաստ պայմանների մեջ աշխատող նախկին արհեստավոր-բանվորի համար այժմ ավելի տեսավարել էր, որ իր հմտությունը անհրաժեշտ է նման ձեռնարկությունում։ Նա «վերևից» էր նայում այն արհեստավոր-բանվորին, որն աշխատում էր մի գործարանում, որտեղ «կրնիկն ավելի շատ է, քան տղամարդը»։ Նա և հմուտ վարպետներ այստեղից հրավիրվում, անցնում էին նորաստեղծ ու մեծացող ձեռնարկությունները։ Երկաթուղային բանվորությունը, այսպիսով, լայն մասնակցություն էր ունենում քաղաքի արդյունաբերության զարգացման գործում։

Արհեստների՝ միմյանց նկատմամբ ղերադրվելու հին սովորության արտահայտությունը նկատելի էր նաև ուրիշ գործարանների բանվորների մեջ, սակայն, այժմ այդ սովորությունը հետապնդում էր ոչ թե կապիտալիստական մրցության սլայմաններում շուկայում անց ունենալու և կույ շղնայու նկատատումներ, այլ իրենց աշխատանքի կարևորությունը շեշտելու, սոցիալիստական մրցության մեջ իրենց ձեռնարկության նշանակությունը ցույց տալու նպատակով։ Այս արտահայտության նոր բովանդակությունն այն էր, որ արհեստավորական գանգավոր տեսնելով տեխնիկայի նոր ճյուղերի զարգացումը, նոր երիտասարդ պատրաստված կադրերի մեծ հոսքը արտադրություն, աշխատում էր, այժմ արդեն արտադրության մեջ, նրանց հավասարվել իր գործնական հմտությամբ։

Սկսած 1929 թ. շինարարությունը մեծ չափեր բնորոշեց։ Քաղաքի վերակառուցման, արտադրա-

կան և բնակարանային շինարարության համար անհրաժեշտ էին ռաբային նոր վարքեր, շինարարական տարրեր նյութեր, որոնք ձեռք էին բերվում շրանում եղած հին ու նոր հանքավայրերից։ Նահագործվում էր եռաբարի բարհանքը, 1925—29 թթ. բացվեց լենինական-Արթիկ երկաթուղին և մուտք գործեց նաև Արթիկի գունավոր տուֆը։ Շինանյութեր էին բերվում Անի-Պեմզայից, Զաչուրից, Դիրաբլարից և այլ տեղերից։

Առաջին հնգամյա պլանի (1928—32) կատարմանը լենինականը ձեռնամուխ եղավ, ունենալով աշխատուժի պատրաստի բաղա և արտադրական մեծ հնարավորություններ։ Արդեն 1928 թ. կային մեծ կառույցներ։ Այդ թվականին շահագործման հանձնվեց հիդրոկայանը, կառուցվում էր երկաթուղային թաղամասը, ավարտվեցին տեքստիլ գործարանի հիմնական մասնաշենքերի շինարարությունը, հրապարակի շուրջ կառուցվեցին Գաղիորհրդի, բանկի շենքերը, բարձրացան տոմետի, մեխանիկական գործարանների շենքերը և այլն։ Բնակելի շենքեր կառուցվեցին այժմ լենինի և Կիրովի փողոցներում, տեքստիլ գործարանի շրջակայքում և այլուր։ Նահագործման հանձնվեց (1935 թ.) մսի պահածոների կոմբինատը «Կաղաչի պոստ» վայրում, դարբնոց-մամլիչային սարքավորումների (հիմնադրվել է դեռևս 1912 թ.), դարչնի, կաթի, մտհնակալի գործարանները, հրուշակեղենի ֆաբրիկան, մի փոքր ուշ՝ հեծանվի պոմպարտեր, հացի գործարանը (1936 թ.)։ Երկաթուղային թաղամասում, տեքստիլ գործարանի մոտ, քաղաքի կենտրոնում կառուցվեցին նոր բաղնիքներ։ Քաղաքի կարիքների համար Ղաղանչի գյուղից բերվեց սառնորակ ջուր (1939 թ.)։ Քաղաքում կառուցվեց հասարակական գրոսայդի նախքան Սա. Նահույանի անունը կրող այս ղրոսայդին, քաղաքին որպես ղրոսայդի է ծառայել «Զերբեղի ձորի» ղինվորական ղրոսայդին՝ հաղաղականների սկզբնավայրը, որը ծառատեղվել էր դեռևս 1882 թ.²³։ Կառուցվեցին ղաղոցներ, հիվանդանոցներ, սկումբներ, թատրոն և այլն։ Այս հսկա շինարարությանը ակտիվ մասնակցում էին նաև հին անվանի վարպետները։ 1940 թ. կատարվում է քաղաքի 4-րդ հատակագծումը։ Նախկին հասարակագծերի մեջ արվում են կական փոփոխություններ։ 1941 թ. քաղաքի բյուջեն 63 անգամ ավելի էր, քան 1923 թ.։

Մեծացավ քաղաքի արդյունաբերական կարողությունը։ Զեռնարկությունները աշխատան-

²³ Պիկ, Ն. Նիկողոսյանի Նյութերը, տետր 3։

քի կոչեցին արհեստավոր բնակչությանը, գյուղացիությանը, Արհեստավորական բնակչության հիմնական մասը վերածվեց առաջավոր բանվոր գասակարգի, Արհեստավորական քաղաքից Լենինականը դարձավ բանվորական քաղաք՝ հանրապետության արդյունարերական խոշոր կենտրոն։

Նոր երևույթ էր այս տարիներին արաագրական ձեռնարկություններում մեծ թվով կանանց ընդգրկումը։ Քաղաքի արհեստավորական բնույթը հնարավորություն էր ընձեռում քաղաքի վերակառուցման տարիներին այսպես ստեղծելու նաև արհեստի ձեռնարկություններ, որոնք ընդգրկեին մեծ թվով կին բանվոր-անայնագործներին²⁴։

Այդ խնդրի իրականացման համար արհեստավորական, նահապետական հին սովորույթներով ապրած գյուղացի կնոջը հարկավոր էր արագորեն համոզել, վերափոխել նրա մտածելակերպը։ Մինչև XX դարի սկիզբը կանացի աշխատանքը քիչ էր կիրառվում։ Մանր արհեստներում նրանք բոլորովին չկային։ Երբեմն միայն նրանք օգնում էին իրենց ընտանիքի արհեստավոր անգամներին այնպիսի արհեստներում, ինչպիսիք են գլխարկկարությունը, գերձակությունը²⁵։ Բացի ընտանեկան առօրյա գործերից, կանայք ղրաղվում էին ասեղնագործություն, գորգագործություն և այլն՝ հիմնականում իրենց տնային կարիքների համար, իսկ երբեմն նաև պատվերով։ տնայնագործական եղանակով։ Կանանց ընդգրկող առաջին արհեստագործական ձեռնարկությունները գորգագործական արհեստանոցներն էին, որոնք հանգես եկան անցյալ դարի վերջին²⁶։

Խորհրդային շրջանում նախ ընդլայնվեց անայնագործությունը։ Այնուհետև սանդղծեցին սրտեղներ, որոնց բաղադրվում էր հեաագայում, ինչպես նշվեց, կաղմակերպվեցին նշված գույաարիկոտած, կարի և այլ ֆարրիկաները։ Արտաղբության մեջ կանանց ընդգրկելու գործում վճաա-

կան եղավ տեքստիլ կոմբինատի հիմնումը 1923—1924 թթ.։

Անհրաժեշտ էր պատրաստել ղգալի թվով բանվորական կագրեր, որի համար հրավիրված ոուս բանվոր-բանվորուհիների ջանքերը քիչ էին։ Այդ նպատակով գործարան և ուսումնական հաստատություններ էին հրավիրվում մասնագետներ, հմուտ վարպետներ։ Համեմատած տնայնագործության, արտելի հետ, գործարանը գեո խորթ էր կնոջ համար։ Եթե ընտանիքի մեծահասակ անգամները հաշտվում էին այն մաքի հետ, որ կանայք աշխատեն արտելում, ապա գործարանում աշխատելը աղգելում էին։ Իսկ եթե ընտանիքի կանանցից որեէ մեկը ըմոստանալով, մտնում էր գործարան, ապա երկար ժամանակ ստիպված էր համբերությամբ տանելու հենց իր հարաղատների անամոթն անվանարկումը։ Ավելի թշնամաբար էին վերաբերվում կոմերիտուհիների, ակտիվիստների, պատկոմականների նկամամբ։

Սակայն կինն իր իրավական տեղն էր գրավում նաև ընտանիքում, հաստրակության մեջ։ Նրա աշխատանքով ղաղծրանում էր ընտանիքի բարեկեցիկ վիճակը, տնտեսական-նյութական ապահովվածության մեջ մեծ նշանակություն էր ստանում նաև կնոջ եկամուտը։ Այս ամենը տեսնելով, աստիճանարար վերափոխվում էին նաև ընտանիքի մեծահասակ անղամները։ Կանանց աշխատանքի հրավիրելու կոչն, այսպիսով, իր ղգալի արդյունքն ունեցավ։ Նույնիսկ Ակի-ի բացառապես տղամարդկային համարվող փականագործական արտագրամասի 1931 թ. առաջին շրջանտվարաների թվում եղել է երիտասարդ մի կին՝ Կ. Հակոբյանը, որի գիմանկարը ավարտական հուշանկարում տեղագրված է առաջին շարքում²⁷։

Կին բանվորուհին որոշ ղծվարությունների էր հանղիպում նաև տղատատավարում՝ արակում, ֆարրիկայում և նույնիսկ գործարանում։ Տղամաղգ բանվորները, վարպետները թերհավատորեն էին նայում կնոջ կատարած գործին, չէին սովորեցնում իրենց իմացածը։ Եվ ղոլոր գեպքերում մեղավոր

²⁴ Տեղի պայմանների ու հնարավորությունների հաղաոման նմանօրինակ մեթողով էին սանղծվում Սնղրկովկասի նաե ուրիշ արղյունարերական քաղաքները, որոնք նախահղափոխական շրջանում ունեցել էին արաագրական որեէ ղաղա։ Քութախում, Բելավում, նկատի առնելով եղած արհեսաները, սանղծվեցին համապատասխան ձեռնարկություններ՝ Թելավում մետաքսի, Քութախում սննղի և այլն, իսկ հեաաղայում ղարղացան նաե մեքենաշինությունը, քիմիական, գյուղանաեասական արղյունարերությունը և ուրիշները (Տե՛ս Т. К. Гегешидзе и др., նշվ. աղխ., էղ 91, Н. Н. Абесадзе, Л. К. Бериашвили, նշվ. աղխ., էղ 103)։

²⁵ СМОМПК, вып. XI, стр. 127.

²⁶ СМОМПК, вып. XI, стр. 140.

²⁷ Պեաք է նշել, որ ընայած տոաղին աարիներին որոշ ձեռնարկություններում ղգաղվում էր մասնագետ կագրերի պակաս, սակայն ղավականաղափ տեխնիկական մտավորականության աղկայության շնորհիվ Հայաստանում հնարավորություններ կային տեղում կագրեր պատրաստելու, ուսաի, այս առումով այնպիսի ողվարություններ չեղան, ինչպես, ասենք, Թուրքմենական կամ ղագախական ՍՍՀ-ներում։ (Տե՛ս III. Аннакличев, Измепение общественно-бытового уклада туркмен в связи с индустриализацией республики, М., 1964, стр. 3.)

²⁸ Տե՛ս հեղինակի հավաքած նյութերը։

էին ճանաչվում կանայք. որոնք «գութ տեղն են» կոչվել աշխատանքի: Ոմանք կարծում էին, որ կանայք ի վիճակի չեն լիտկաաար հմտության, վարպետության հասնելու:

Բայց այդ ժամանակավոր զովարությունները աշխատանքային նոր տարածանքում հետզհետե վերանում էին, հատկապես այնպիսի գործարաններում, ինչպես ասենք, Մայիսյան ասպտամբուլյան անվան տեքստիլ կոմբինատն էր, ուր կանացի աշխատանքը ղեկավարում էր Բանվորական եղբայր Վարդի մասը այնպիսի նոր գործարաններում երիտասարդներ էին, կային ոռու և այլազոր բանվորներ: Տեղացի արհեստավոր կամ տնայնագործ բանվորների սովորույթները այնպիսի մեծ կոնկրետիվներում կական նշանակություն չէին կարող ունենալ:

Հին սովորությունների որոշ արտահայտություններ նկատվել ու դեռևս նկատվում են փոքր ձեռնարկություններում, հատկապես այնպիսիներում, որոնց համար, ինչպես նշել ենք, բազմա էին հանդիսացել նաև արհեստները: Պատմողները նշում են վարպետների, որոնք իրենց սառը, անտարբեր վերաբերմունքն են ցուցաբերել աշակերտների նկատմամբ, ամեն րան շեն սովորեցրել նրանց, դործի մեջ ընկնել էին նախ իրենց որդիներին, հարստներին: Արհեստն այնպիսի էր հետաքրքիր չէր արվում: Իշակերտը տառջին տնկում գործարան մտնելով, երբեմն հանդիպում էր վարպետի, որը նախքան սրել բուն սովորեցնելը, ծանրաբեռնում էր նրան կողմնակի դարձնելով, երբեմն ծաղրում, զովարություն էր դործին «մոտեցնում», աշխատում էր հնարավորին յալի երկարացնել նրա ուսման ժամկետը: Կատ զիտավորության չկար դրսնում: Իկյուկն էին վերաբերվում, որովհետե պես հին նախադասարումից չէին ազատվել: Իկյուկն էին սովորեցրել իրենց, այդպես էին վարվել ձեռողները: Բյուս կոչմից «վախենալով», որ շուտով նորավարտ մասնագետները, նոր կարգերը կարող են արտադրության մեջ դերապանցել իրենց, թերահավատություն էին ցուցաբերում նրանց նկատմամբ, նախադասությունը, առաջնությունը տալիս իրենց պատրաստում կարգերին: Լսակայն աշխատանքի ընթացքում չլիվելով ընդամենը մի րանի աարի տուտջ բանվոր, այլ մասնագետ դարձած, տեղական ու դարձնական պատրաստակալություն ունեցող իրենց ընկերոջ հետ, տեղի էին տալիս: Լսուհիճանարար գործարան էին դալիս նաև ֆարրիկա-գործարանային ուսումնորանները, արհեստագործական դպրոցների սա-

ները, որոնք բանվորական պատրաստի կարգեր էին:

Նոր կարգերի շրջապատում, սակայն, միշտ էլ ուրալն աեղ է հաակացվել հին վարպետներին, նրանց էր հանձնարարվում աշխատանքի գործնական ղեկավարումը, կարգերի գործնական ուսուցումը, և միաժամանակ հնարավորություններ էին ստեղծվում նրանց աեական առաջադիմություն համար: Նման երևույթները նկատելի էին նաև այնպիսի գործարանների արադրամասերում կամ արհեստանոցներում, որոնք ժամանակավոր նշանակություն ունենալով, չպեսք է դարգանային, մեքենայացման հետ դուրս պեսք է գային, ինչպես, օրինակ՝ որոշ գործարաններում, իստատային արտադրամասի կողքին, նախկին աեխնոլոգիայով փականսվործությունը, դարընությունը, ձեռքով փորագրությունը տպարաններում, վերանորոգման եայանների արհեստավորական արադրամասերը և այլն: Հին սովորույթների վերափոխված արտահայտությունները, այսպիսով, ուվելի շատ երկվան էին դալիս կենցաղային սոցաալական կոմբինատի, տեղական արդյունաբերության ֆարրիկայի արհեստավորական արադրամասերում:

Արհեստավորական մի որոշ խավի հեա արտադրական ձեռնարկությունները բերվող հին սովորույթները, աշխատանքի նոր մեթոդների առկայության գեղբում, խոշոր ձեռնարկություններում արադ, իակ փոքր ձեռնարկությունների որոշ հատվածներում ալելի դանդաղ վերանում, վերափոխվում կամ ձուլվում էին նոր սովորույթների հետ: Գաստրարակվելով մի ընդհանուր կոնկրետի մեջ, արդյունաբերական բաղարի ամբողջ ազդարնակչությունը և նրա մեջ առաջին հերթին մեծ մաս կազմող բանվորությունը վերափոխում էր իենց իրեն: Իշխաաանքային առօրյայում համողվելով հին սովորույթներից շաաերի ալելորդության մեջ, նա հակվում էր դեղի նորը, որով պայմաններ էին ստեղծվում նոր ալանդույթների առաջադման համար:

Խաղաղ շինարարական աշխատանքի եռուն տահին էր, երբ 1941 թ. հունիսի 22-ին սկսվեց Հայրենական մեծ պատերազմը:

ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների հետ միասին Հայրենիքի պաշտպանության առաջնահերթ խնդրին ձեռնամուխ եղավ նաև Հենինականի աշխատավորությունը:

Կուսակցական, կոմերիտական, հասարակական մյուս կազմակերպությունների ղեկավարությամբ, ամբողջ ժողովրդի հերոսական քանքերով արդյունաբերությունը, դյուղատնտեսությունը

արագորեն փոխադրվեց ռազմական ուղու վրա: «Ամեն ինչ ռազմաճակատի համար» կոչին արձա-
դանքելով, քաղաքում ստեղծվեցին պաշտպանա-
կան արդյունաբերության նոր օբյեկտներ, կազ-
մակերպված ձևով ամեն ինչ ծառայեցվում էր
նախ և առաջ պաշտպանության պորժին:

Լենինականի խոշոր արդյունաբերական ձեռ-
նարկությունների հետ մեկանել, ինչպիսիք էին
Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ
կոմբինատը, մանարան դործարանը, գուլպա-
տրիկոաժի ֆաբրիկան և ուրիշներ, պաշտպանու-
թյան դործին իրենց մեծ ծառայությունն էին մա-
տուցում անդրերկաթուղու Լենինականի հան-
գույցը, նոր կաղմակերպված տեղական արդյունա-
բերական ձեռնարկությունները, արհեստագործա-
կան կոոպերացիայի արտոնները:

1941—1945 թթ. Հայրենական պատերազմի
տարիներին ավելի ակնառու արտահայտվեց կոո-
դերը աշխատանքային կենցաղում: Ավելի լայն
չափերով ընդգրկվելով արդյունաբերության մեջ,
կիներ իր պաշտպան տեղը գրավեց այնպեղ²⁰:

Փոխարինելով ռազմաճակատ մեկնած տղա-
մարդ բանվորներին՝ իրենց ամուսիններին, որդի-
ներին և եղբայրներին, կանայք աշխատանքի էին
անցնում ոչ միայն թեթև արդյունաբերական, այլև
տղամարդկային ուժ պահանջող ձեռնարկություն-
ներում: Լենինականի կին աշխատավորները կոչ
էին անում փոխարինել ռազմաճակատ ղնացողնե-
րին սմենուրեք, սիրապետել տղամարդկանց պրո-
ֆեսիաներին: Նրանց համար կազմակերպում էին
տեխնիկական ուսուցման խմբակներ: Առաջավոր
բանվորուհիներ, կին բրդաթուղային դեպոններում, մեքենա-
վարների շարքերում, մեխանիկական պործարան-
ներում և այլուր: Կանանց հետ մեկտեղ արտա-
դրություն էին մտնում աշխատելու արհեստագոր-
ծական ուսումնարանների երիտասարդ կադրերը և
պատանի տղաներն ու աղջիկները: Աշխատանքի
էին անցնում տնային տնտեսուհիներ, զրասենյա-
կային աշխատակցուհիներ և աղջիկներ: Լինելով
հիմնականում արհեստավոր բանվորների ընտա-
նիքի անդամներ, նրանք լավատեղյակ էին ար-
հեստներին, դործարանային տարրեր աշխատանք-
ներին: Այդ պատճառով դարմանալի չէր, երբ

հանրապետության մյուս քաղաքների համեմա-
տությամբ Լենինականում արտադրության մե-
քնդրված կանանց թիվն ամենաբարձրն էր²¹:
Նույն բանը կարելի է ասել նաև պատանիների
մասին:

Հայրենական պատերազմի տարիներն մի
սեռակ բնություն տարիներ հանդիսացան ամբողջ
աշխատավոր ժողովրդի համար: Հաջողությամբ
եատարելով իր սուգը դրված արտադրական խոն-
դիրները, Լենինականի աշխատավորությունը հաղ-
թահարում է նաև տնտեսական, կենցաղային և այլ
կարգի այն առանձին դժվարությունները, որոնք
առաջացել էին պատերազմի հեռանկարով:

Լենինականի կուսակցական և պետական օր-
դանների ղեկավարությամբ և աջակցությամբ
ստեղծվում էին հնարավորություններ աղգարնակ-
չության տնտեսական վիճակը բարելավելու հա-
մար: Բանվորներին, ծառայողներին, մտավորա-
կանությանը և ամբողջ աղգարնակչությանը անձ-
նական օգտագործման համար հատկացվեցին
հողամասեր: Այդ հողամասերում աղգարնակչու-
թյունն աճեցնում էր կենսական անհրաժեշտ
մթերքներ՝ հացաբլիթներ, կարաոֆիլ և այլ
բանջարեղեն: Բնակչության՝ հողագործության
հետ կապված կարիքները հողալու համար
ուղևական օրգանները ընդլայնեցին տեղական
արդյունաբերությունը: Կենցաղային կարիքների
համար արհեստագործական արտոնները տը-
տադրում էին լույն սպառման առարկաներ,
կատարում էին վերանորոգումներ և այլն:
Արհեստավորական կյանքն աշխուժացավ: Արտե-
ների կողքին հանդես եկան նաև մասնավոր տը-
հեստավորների կրպակներ: Արհեստավորական
արտադրամասերի կողքին, որանք էլ, բոս հնարա-
վորին, աշխատում էին բավարարել բազմաթի
բնակչության, ինչպես նաև ղյուլագիտության
առանձին պահանջները: Դատարաստվում և նորոգ-
վում էին ղյուլատնտեսական դործիքներ, կենցու-
ղային իրեր, ամանեղեն, կահույք, մահճակալներ,
վառարաններ և այլն: Վերանորոգում էին նաև
կոլտնտեսություններից բերվող ղյուլատնտեսա-
կան մեքենաները:

Արհեստների աշխուժացմանը նպաստում էին
նաև որոշ հին, կենցաղային ոչ լայն տարածում
ունեցող արտականների օգտագործումը, որոնք խիստ
տեղական լինելով, պատրաստվում կամ նորոգ-
վում էին միայն տեղի արհեստանոցներում: Ռազ-
մաճակատի կարիքների համար հումքի ոգտագոր-
ծումը հնարավորություն չէր տալիս արտադրելու

²⁰ ՍՍՀՄ հատկապես ասիական, մասամբ նաև անդրկով-
կասյան հանրապետությունների համար Հայրենական պատե-
րազմի այդ տարիները հանդիսացան ավանդույթային որոշ
պարփակված սովորույթների վերագման տարիներ: Զբաղի
դարձավ կանանց հոսքը արդյունաբերական ձեռնարկությու-
նեը և այլուր: (ՏԵՍԱՄ. АНКА. 1946, Изменения..., стр. 5.)

²¹ ՏԵՍԱՄ Կ. Կազմույան, Լենինական, էջ 86—92:

մեծ թվով սպառման ապրանքներ ու իրեր և քնակ-
ություններ վերանորոգում էր հինքը Արհեստաների,
հատկապես մանր արհեստագործության աշխու-
ժացումը, բնականաբար, նորից կյանքի կոչեց
արհեստավորական որոշ հին ավանգույթների
մնացուկներ:

Պատերազմից հետո, տնտեսության վերա-
կանդնման տարիներին, արհեստները ղեկ շարու-
նակում էին աշխուժանալ: Սակայն զրա հետ
մեկտեղ հետզհետե ավելի խոր էին արմատավոր-
վում աշխատանքի նոր մեթոդներն ու եղանակները
սրբապատկան թուրք ճյուղերում: Ուստի արհես-
տավորական որոշ հին սովորույթներ հանդես էին
դալիս արդեն վերափոխված արտահայտությամբ:
Իրանը, զբոսն չկային կամ լիովին վերափոխված
էին արտահայտվում արտադրական ձևերակու-
թյուններում: Անուամենայնիվ, պատերազմի և
հուպատերազմյան ասպիսի տարիներին վերանո-
ւազման ձևերակութայններում, արանսպորտի և
տնտեսության որոշ ճյուղերում, փոքր ձևերակու-
թյուններում աշխատանքային նոր փոխարարերու-
թյունների կարգին, բանվորական նոր սովորույթ-
ների հետ մեկտեղ, ղեկոս կարելի էր տեսնել վար-
պետների, եկամտավորականների, աշակերտների
փոխարարելություն հին արտահայտությունների
մեծացուկներ:

Նոխիկներում բանվոր, ույժմ վարորդ Ալեք-
սանդր Սիմոնյանը պատմում է, որ պատերազմի
տարիներին, երբ ինքն ընդունվել է ավտոմեքե-
նոսների վերանորոգման արհեստանոցը որպես
բանվոր ու հարցրել է վարպետին, թե. «Ուստա,
ինչ պրտի էնեմ», վարպետը հանձնարարել է մյուս
զեկից բերել «հորդի գյամին» (սխորդի գյամը)¹⁾
ստե՛ծը սպասված ձևով: Երբ մի բանի անդամ
նրան ձանր իրեր տալով այս ու այն կողմ են
սպարկում, իբր թե իրենց ուզած «գյամին» չի բե-
րել, Ալեքսանդրը գլխի է ընկնում, որ իրեն ծաղ-
րում են: Այդ տեսում էին, որպեսզի կտարեն նորեկի
զոտսպությունը, ցույց տան, որ ղեկ շատ բան ունի
սովորելու և մասնակից շուտ հավակնություններ
չունենա, օգլխին դոռ տա, լինի աշխատաց, համ-
բերատու, հարդի վարպետին, աշխատանքը
երբությունները սովորեցնում էին հետզհետե, նա-
խապես բրանաքան աշխատեցնելով ծանր ասե-
նաշխատանքներում: Այդ կերպ բարձրանում էր
պատասխանատվությունը աշխատանքի նկատ-
մամբ, հարդանքը ղեկի այն, ինչպես լենինական-
ցիկներն են ասում՝ «վատարակածի գազրն իմանա»²⁾:

Տարբերակ, երբեմն նույնիսկ հեռամնաց
որոշ սովորույթներ հանդես եկան բանվորական
մի նոր խավի՝ վարորդների մեջ: Ինչպես հայանի
է խորհրդային կարգերի հաստատման առաջին
տարիներին ավտոմեքենա ղեկ թիչ կար, արանս-
պորտի մեջ մեծ տեղ չունեի: Տեխնիկայի զարգա-
ցումով աստիճանաբար տրանսպորտ մուտք գոր-
ծեց ավտոմեքենան և փոխադրական այլ շարժիչներ
ու մեքենաներ: Մեծացավ վարորդների պահանջը,
կադմակերպում էին վարորդական գասերթացներ,
մասնագետներ էին պատրաստում ավտոպարկե-
րին, ավտովերանորոգման արհեստանոցներին
կից, ինչպես նաև օգնական աշակերտության
միջոցով:

Այս համեմատաբար նոր մասնագիտությունը
րապտուց ինչպես արհեստավորներին, այնպես
էլ կյանքից արդեն ղուրս մղվող կառապաններին,
նաև՝ երկաթուղային բանվորներին:

Այս նոր մասնագիտությունը որոշ չափով
տարբերվում էր գործարանայինից՝ ավելի անհա-
տակալ բնույթ ուներ: Բացի այդ, նոր մասնագի-
տություն էր, ղեկոս փոքրածիվ ներկայացուցիչ-
ներով և այդ իմաստով սրտոնյալ վիճակ էր ըս-
տեղծվում զրանով զրազվողների համար: Այսպի-
սով, ինչպես այս շրջանում, այնպես էլ առավելա-
յուն պատերազմի տարիներին առաջացած դժվա-
րությունների պայմաններում հաստիքային օգնա-
կանների կողմից երեսն եկան նաև մասնավոր
կարողով աշխատող օգնականներ:

Վարորդներից շատերը վերցնում էին օգնա-
կան («պամոշնիկ»), որոնք դառնում էին զբոսն
համբարական աշակերտի վիճակում: Սրանք իրենց
վարորդներին անվանում էին «ուսաա», անտար-
կելիորեն կատարելով ամբողջ ուն աշխատանքը,
ինչպես նաև տնային շատ գործեր: Ողնականներին
իրենց մոտ երկար պահելու միտումով վարորդները
չէին շատում նրանց սովորեցնել վարելու հմտու-
թյունը, բայց վախենալով, որ կարող են օգնական-
ները վախճել իրենցից, որոշ չափով վարձատրում
էին: Հակառակ դեպքում, յուրաքանչյուր օգնական
կարող էր թողնել այդ գործն ու մտնել պետական
աշխատանքի, և եթե այդ չէր տեսնում կամ չէր դի-
մում պետական մարմնի միջամտությանը, ապա
միայն այն պատճառով, որ հույս ուներ առանց
«սովորդ» գասերթացների շուտ նստել ղեկի
առջև: Այդ շրջանում էր, սակայն, որ կիրարկու-
նարկական ձևերակութայնները մտնելուց բացի,
հանդես էր գալիս նաև արհեստի՝ ողամարզու ար-
հեստի մեջ: Իսկ կատարվեց շայրենական պատե-
րազմի տարիներին, երբ տեղի էր ունենում արհես-

¹⁾ Եթե, հեղինակի հավաքած նյութերը:

աավորական կյանքի որոշ աշխուժացում: Մինչև վերջերս էլ լենինականի արհեստավորական արտադրամասերի կողքին, շուկայի հրապարակի մոտ կարելի էր տեսնել մի սասնավոր արհեստանոց, որտեղ վերանորոգվում էին նավթավառներ, պրիմուսներ և այլ կենցաղային առարկաներ: Այդտեղ որպես վարպետ աշխատում էր կին արհեստավորը Կարճիկյան Եվգինեն: Նա հին արհեստավոր, փականագործ Կարճիկյանների հարսն էր, Կարճիկյան եղբայրներից իր պապական արհեստը շարունակող Աշոտի կինը: Պատերազմի դժվարին ամիսներին հիվանդանում է Եվգինենի ամուսինը, և ընտանիքի հոգսը հողալու, երեխաներին խնամելու համար նա համարձակորեն որոշում է ոչ այլ ինչ, քան ամուսնու արհեստը շարունակել: Ատկայն դա կապված էր բարոյական և ֆիզիկական մեծ դժվարությունների հետ: Չնայած արհեստավորները թերահավատորեն են նայել այդ երևույթին, այնուամենայնիվ չեն պարսավել, չեն խուսափել որոշ ցուցումներ առ կամ հաճախորդ ճարել նրա համար: Այսպիսով, նա աստիճանաբար տիրուպետում է արհեստի նրբություններին: 1944 թ., ամուսնու մահից հետո, նա արդեն հիմնովին նվիրվում է արհեստին³²:

